# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«26» «հուլիսի» 2023թվական N 1850-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 444-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի 2023թվականի փետրվարի 27-ի «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, թույլտվությամբ սահմանված պայմանների, քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումները վերացնելու մասին» N 444-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, թույլտվությամբ սահմանված պայմանների քաղաքաշինական նորմերի ու կանոնների

խախտումները վերացնելու մասին» N 444-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1)որոշման 2–րդ կետում «խախտումները» բառը փոխարինել «խախտումների » բառով,

2)որոշման 2–րդ կետում «խախտումների» բառից հետո լրացնել «վերացումը» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռուզաննա Փայլակի Նալբանդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ. Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2023 **թվականի** N 1849-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 07-Ի N 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 409.98 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 100.93 քառակուսի մետր արտաքին (80.88 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 17-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 409.98 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 100.93 քառակուսի մետր արտաքին (80.88 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 17-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) նախաբանում «կետի» բառից հետո լրացնել «և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը՝ N 2023ՅՍ4ՍԿՊ» թիվը և բառերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<25>> հուլիսի 2023 թվականի N 1898-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԶԵԼԻ ՋԻՈՎԱՆԻԻ ԷԼԲԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Նազելի Ջիովանիի Էլբակյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նազելի Ջիովանիի Էլբակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> հուլիսի 2023 թվականի N 1847-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԵԼԻՔԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու կոմունալ ծառայություն >> համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտավազդ Մելիքի Ոսկանյանի հետ 2022 թվականի հուլիսի 26-ին կնքված թիվ 5 աշխատանքային պայմանագրի ( այսուհետ՝ պայմանագիր) գործողության ժամկետը երկարաձգել 3 ( երեք ամիս) ժամկետով՝ մինչև 2023 թվականի հոկտեմբերի 27-ը ներառյալ:

**2.**Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն:

**3**. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտավազդ Մելիքի Ոսկանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2023 **թվականի** N 1846-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N 263-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 04-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ հաստատելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 22-ի N 516-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 263-Ա որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի, առաջատար մասնագետի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ հավելվածներ NN 134, 136, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

25.07.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի 2023

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 25-ի N 1846-Ա որոշմամբ

«Հավելված N 136
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 04-ի N 263-Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1.** Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի (այսուհետ՝ բաժին) առաջատար մասնագետ 3.1-51

**1.2.** Ենթակա և հաշվետու է
Բաժնի պետին

**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի գլխավոր մասնագետը կամ բաժնի այլ առաջատար մասնագետը

**1.4.** Աշխատավայրը
Գյումրու համայնքապետարան

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1.** Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Բաժնի առաջատար մասնագետը՝

1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

2)ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,

3) հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին,

4)իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար,

6) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին,

7) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

հանձնարարությամբ, մասնակցում է սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

24) իրականացնում է անձանց դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.

25) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.,

26) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

**3. Կազմակերպական շրջանակը**

**3.1.** Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1) չունի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ,

2) օժանդակում է համապատասխան ստորաբաժանման (աշխատակազմի) ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է համապատասխան ստորաբաժանման (աշխատակազմի) աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը,

3) ենթակա և հաշվետու է իր անմիջական ղեկավարին,

4) չունի իրեն ենթակա աշխատողներ,

5) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար:

**3.2.** Որոշումներ կայացնելու լիազորությունները

Մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

**3.3.** Շփումները և ներկայացուցչությունը

1) աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ,

2) աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ,

3) աշխատակազմից դուրս կարող է հանդես գալ որպես ներկայացուցիչ:

**3.4.** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

**4. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**4.1.** Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

**4.2.** Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 25-ի N1846-Ա որոշման
Հավելված N 134
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 04 -ի N 263 -Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1.** Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի (այսուհետ՝ բաժին) գլխավոր մասնագետի 2.3-50

**1.2.** Ենթակա և հաշվետու է
Աշխատակազմի քարտուղարին

**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի բաժնի պետը, կամ այլ գլխավոր մասնագետը կամ բաժնի առաջատար մասնագետը

**1.4.** Աշխատավայրը
Գյումրու համայնքապետարան

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1.** Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին,

3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին,

4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին,

6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը,

հանձնարարականների կատարմանը:

**3.3.** Շփումները և ներկայացուցչությունը

1) աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ,

2) աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ,

3) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

**3.4.** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

**4. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**4.1.** Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

**4.2.** Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4) տիրապետում է ռուսերեն (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվին:

**4.3.** Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

**5.Համայնքային ծառայության դասային աստիճանը**

Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հուլիսի 2023 թվականի № 1845-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 23/1 ՀՈՂԱՄԱՍ (ՎԿԱՅԱԿԱՆ №2885810) ԵՎ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 87 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ (ՎԿԱՅԱԿԱՆ №2645226) ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Ղազարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14893 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Ա. Մանուկյան փողոց 23/1 հողամաս (վկայական №2885810) և 26 Կոմիսարների փողոց 87 բնակելի տուն (վկայական №2645226) հասցեագրությամբ անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 23 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

25.07.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հուլիսի 2023 թվականի N 1844Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՆԱ ԳԵՆԱԴԻԵՎՆԱ ԻՎԱՆՈՎԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑ N161 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 52,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աննա Իվանովային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N161 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 52.58 (հիսուներկու ամբողջ հիսունութ հարյուրերորդական )քառ.մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Աննա Իվանովան դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Աննա Իվանովայի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 06,06.2023թ. N 11359թվագրությամբ)՝ կադաստրի կոմիտեում Լիաշվառված է՝ 20238KC7L7 ծածկագրով:

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Աննա Գենադիևնա Իվանովային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N161 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 52.58 (հիսուներկու ամբողջ հիսունութ հարյուրերորդական)քառ.մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աննա Գենադիևնա Իվանովային պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«24» հուլիսի 2023 թվականի N1843-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՐԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԻԼԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 179 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 154,56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ, 1ԴՈՒՌԸ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Մարինե Սերյոժայի Կիրակոսյանին և Հովհաննես Վիլենի Կիրակոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 179 հասցեի տան հողամասում 2001 թվ մայիսի 15 –ից հետո ինքնակամ կառուցված է 154,56 ( մեկ հարյուր հիսունչորս ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական ) քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ և ինքնակամ բացված է 2 (երկու )պատուհան , ինքնակամ փակված է 1( մեկ) դուռ և 1 մեկ դուռը ձևափոխված է պատուհանի

Քաղաքացի Հովհաննես Վիլենի Կիրակոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 . կետի, 18-րդ կետի դ ենթակետի <<Տեղական Ինքնակառավարման մարմիններ >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Վիլենի Կիրակոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 01..06.2023թ. N10783 թվագրությամբ).կադաստրի կոմիտեում հաշվառված է 2023UKKG6W ծածկագրով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ .**

1 Քաղաքացիներ Մարինե Սերյոժայի Կիրակոսյանին և Հովհաննես Վիլենի Կիրակոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 179 հասցեի տան հողամասում 2001 թվ մայիսի 15 –ից հետո ինքնակամ կառուցված 154,56 ( մեկ հարյուր հիսունչորս ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական ) քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները և ինքնակամ բացված 2 (երկու )պատուհան , ինքնակամ փակված 1( մեկ) դուռ և 1 մեկ դուռը ձևափոխված պատուհանի ճանաչել օրինական: Տեղական բյուջե ենթակա է գանձման 508343 ( հինգ հարյուր ութ հազար երեք հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ:

2 Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մարինե Սերյոժայի Կիրակոսյանին և Հովհաննես Վիլենի Կիրակոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ x Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2023 թվականի N 1842-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 268, 25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 148,42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ( 125,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոցի հարևանությամբ 268,25 (երկու հարյուր վաթսունութ ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 148,42(հարյուր քառասունութ ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 125,77 (մեկ հարյուր քսանհինգ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի և սպասարկման օբյեկտ, որոնք տիրապետում և օգտագործում է < <եվրոպա-7>> ՍՊԸ-ն

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ կադաստրի կոմիտեում հաշվառված 20238UQZQY ծածկագրով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գ,Նժդեհի փողոցի հարևանությամբ 268,25( երկու հարյուր վաթսունութ ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 148,42 ( մեկ հարյուր քառասունութ ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 125,77 (մեկ հարյուր քսանհինգ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին և սպասարկման օբյեկտը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած <<Եվրոպա-7>> ՍՊԸ-ին
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2023 թվականի N 1841-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ՎԱՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ N17 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 32.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ, 2 (ԵՐԿՈՒ) ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 3 (ԵՐԵՔ) ԴՌՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Կարեն Վանիկի Մանուկյանին պատկանող Գյումրի քաղաքի Բորյան փողոց N17 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 32.49 (երեսուներկու ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ, ինքնակամ բացված են 1 (մեկ) դուռ, 2 (երկու) պատուհաններ և ինքնակամ փակված են 3 (երեք) դռներ:

Քաղաքացի Կարեն Վանիկի Մանուկյանի լիազորված անձ Արմեն Մինասյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023AVARGZ ծածկագիրը և քաղաքացի Կարեն Վանիկի Մանուկյանի լիազորված անձ Արմեն Մինասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N8761 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Կարեն Վանիկի Մանուկյանին պատկանող Գյումրի քաղաքի Բորյան փողոց N17 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 32,49 (երեսուներկու ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը, 2 (երկու) պատուհանները և ինքնակամ փակված 3 (երեք) դռները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 30598 (երեսուն հազար հինգ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ու Մ**

«24» նոյեմբեր 2023 թվականի N1840Ա

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ N45, ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑ N82, ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ N86 ՀԱՍՑՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 943.33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 854.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (683.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N45, Աթարբեկյան փողոց N82, Մայակովսկու փողոց N86 հասցեների հողամասերում ինքնակամ կառուցված են 943.33(ինը հարյուր քառասուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, 854.35(ութ հարյուր հիսունչորս ամբողջ երեսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (683.42(վեց հարյուր ութսուներեք ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով եկեղեցի:

Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի համայնքի լիազոր ներկայացուցիչ Արտյոմ Թովմասյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023HTEKNU ծածկագիրը և Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի համայնքի լիազոր ներկայացուցիչ Արտյոմ Թովմասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N12034 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N45, Աթարբեկյան փողոց N82, Մայակովսկու փողոց N86 հասցեների հողամասերում ինքնակամ կառուցված 943.33(ինը հարյուր քառասուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը, 854.35(ութ հարյուր հիսունչորս ամբողջ երեսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (683.42(վեց հարյուր ութսուներեք ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով եկեղեցին ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 6443508 (վեց միլիոն չորս հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր ութ ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2023 թվականի N 1839-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 1632-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի « Քաղաքացիներ Արմեն Վրեժի Նահապետյանին և Գայանե Յուրիկի Նահապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց N1/7 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 257.72 քառակուսի մետր արտաքին (204.86 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի, 474.85 քառակուսի մետր արտաքին (419.81 քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինություններն օրինական ճանաչելու մասին» N1632-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի 13/07/2023 NԿ-13072023-08-0107 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի « Քաղաքացիներ Արմեն Վրեժի Նահապետյանին և Գայանե Յուրիկի Նահապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց N1/7 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 257.72 քառակուսի մետր արտաքին (204.86 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի, 474.85 քառակուսի մետր արտաքին (419.81 քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինություններն օրինական ճանաչելու մասին» N1632-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<հասարակական>> բառից հետո լրացնել <<(սպասարկման օբյեկտ)>> բառերը:

24.07.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2023 թվականի N 1838-Ա

**<<ԵՎՐՈՊԱ-7>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 562,43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 491,71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿԱՄ ՕԲՅԵԿՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

<< Եվրոպա -7>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գ Նժդեհի փողոց N 1 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 562,43 (հինգ հարյուր վաթսուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, 491,71( չորս հարյուր իննսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտ:

<< Եվրոպա -7>> ՍՊԸ -ն դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 28.02.2023թ. թվականի N 3374թվագրմամբ) նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով, որը կադաստրի կոմիտեի կողմից հաշվառված է՝ 2023TARNHH ծածկագրով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. << Եվրոպա -7>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գ Նժդեհի փողոց N1 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 562,43 (հինգ հարյուր վաթսուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, 491,71( չորս հարյուր իննսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 4212442( չորս միլիոն երկու հարյուր տասներկու հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում << Եվրոպա-7>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2023 թվականի N1837-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N1634-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի « Քաղաքացիներ Արմեն Վրեժի Նահապետյանին և Գայանե Յուրիկի Նահապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց N1/9 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 299.2 քառակուսի մետր արտաքին (270.73 քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու մասին» N1634-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 13/07/2023 թվականի NԿ-13072023-08-0108 որոշում);

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի՝ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի « Քաղաքացիներ Արմեն Վրեժի Նահապետյանին և Գայանե Յուրիկի Նահապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց N1/9 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 299.2 քառակուսի մետր արտաքին (270.73 քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու մասին» N1634-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<հասարակական>> բառից հետո լրացնել <<(սպասարկման օբյեկտ)>> բառերը.

2) որոշման 1-ին կետում <<770920 (յոթ հարյուր յոթանասուն հազար ինը հարյուր քսան)>> թիվը և բառերը փոխարինել <<777920 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր քսան >> թվով և բառերով.

24.07.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2023 **թվականի** N 1836-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08 -Ի N 1151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Քաղաքացի Գայանե Պարույրի Հայրապետյանին պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց 7-րդ նրբանցք N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 69,18 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռն օրինական ճանաչելու մասին>> N 1151-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17/05/2023 թվականի N Կ-17052023-08-0123 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Քաղաքացի Գայանե Պարույրի Հայրապետյանին պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց 7-րդ նրբանցք N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 69,18 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռն օրինական ճանաչելու մասին>> N 1151-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրից, նախաբանից, որոշման 1-ին կետից հանել <<ինքնակամ փակված 1(մեկ) դուռն>> թիվը և բառերը.

2) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<69,18 (վաթսունինն ամբողջ տասնութ հարյուրերորդական) >> թիվը և բառերը փոխարինել <<62,51 (վաթսուներկու ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

3) որոշման 1-ին կետից հանել <<տեղական բյուջե ենթակա է գանձման 2316 (երկու հազար երեք հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ>> բառերը և թիվը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2023 **թվականի** N 1835-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22 -Ի N 1618-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 22-ի <<Քաղաքացի Մարինե Սմոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N 8 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 60,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով 53,82 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 3 պատուհանը օրինական ճանաչելու կարգավիճակի մասին>> N 1618-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 07/07/2023 թվականի NԿ-07072023-08-0142 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 22-ի <<Քաղաքացի Մարինե Սմոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N 8 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 60,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով 53,82 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 3 պատուհանը օրինական ճանաչելու կարգավիճակի մասին>> N 1618-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
    1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<3 պատուհան>> թիվը և բառերը փոխարինել <<4 (չորս) պատուհան>> թվով և բառերով.
    2) որոշման 1-ին կետում <<152393 (մեկ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր իննսուներեք)>> թիվը և բառերը փոխարինել <<154709 (մեկ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր ինը)>> թվով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«24» հուլիսի 2023 թվականի N 1834-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի N 1141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 05-ի <<Քաղաքացիներ Անահիտ Գարեգինի Պետրոսյանին և Սամվել Գարեգինի Թումասյանին պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 27,92 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 40,94 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1141-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/06/2023 թվականի N Կ-30062023-08-0163 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի <<Քաղաքացիներ Անահիտ Գարեգինի Պետրոսյանին և Սամվել Գարեգինի Թումասյանին պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 27,92 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 40,94 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.
   1) որոշման 2-րդ կետում <<իրավունքը>> բառից հետո լրացնել <<յուրաքանչյուրին՝ 1/3 մաս>> բառերը և թիվը.
   2) որոշման 1-ին կետում <<Անահիտ>> բառից հետո լրացնել <<Գարեգինի>> բառը և <<Սամվել>> բառից հետո լրացնել <<Գարեգինի>> բառը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_24_» _հուլիսի_ 2023 **թվականի** N_1833_-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի N 1473-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24 -Ի N 1323-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի <<Քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 14,37 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունը՝ ինքնակամ բացված 2 պատուհանը և 2 (երկու) դուռը ձևափոխված բացվածքի օրինական ճանաչելու մասին>> N 1323-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/07/2023 թվականի N Կ-11072023-08-0209 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի <<Քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 14,37 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունը՝ ինքնակամ բացված 2 պատուհանը և 2 (երկու) դուռը ձևափոխված բացվածքի օրինական ճանաչելու մասին>> N 1323-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
   1) նախաբանում <<կետով>> բառից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով>> բառերը և թվերը.
   2) որոշումը լրացնել $1^1$. կետով հետևյալ բովանդակությամբ.

<<$1^1$. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 3 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:>>.

3) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<2(երկու) պատուհանը>> թիվը և բառերը փոխարինել <<5(հինգ) պատուհանը>> թվով և բառերով.

4) որոշման 1-ին կետում <<5688(հինգ հազար վեց հարյուր ութսունութ)>> թիվը և բառերը փոխարինել <<9954(ինն հազար ինը հարյուր հիսունչորս)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի N 1323-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> 2023 թվականի հունիսի 09-ի N 1473-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

24.07.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«--24--»«----հուլիսի----» **2023 թվական N 1832 -Ա**

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219¹ հոդվածով, 2023 թվականի հուլիսի 20-ին ժամը՝ 11:45 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի Ջիվան Սարիբեկի Ավոյանի /Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Վարդ-Բաղ 1-ին ՄԿՐՇ, 1-ին թաղամաս, շենք 4, բնակարան 35, անձնագիր AT 0628469/ բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի մայիսի 31-ին կազմած՝ քաղաքացի Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանը, Ղ.Հարությունյանը,Ս.Խաչատրյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս 2023 թվականի մայիսի 31-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն :

2023 թվականի մայիսի 31-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանը, Գյումրի քաղաքի Տերյան և Շահումյան փողոցների խաչմերուկում՝ ոչ սահմանված վայրում առանց համապատասխան թույլտվության իրականացնում է առևտուր, քաղաքացի՝ Ջիվան Ավոյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է , որը հավաստում է իր իսկ կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի մայիսի 31-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված լուսանկարներով, որոնք հավաստում են իրավախախտում կատարելու փաստը:

Քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանը հարուցված վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասի պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման «Ազդարար.ամ» («Azdarar.am») պաշտոնական կայքի միջոցով:

Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով.

Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական

ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

Նկատի ունենալով վերոգրյալը, ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 169.16 հոդվածի 4-րդ մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 29.1-րդ հոդվածի 14 և 15-րդ մասերով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով՝ 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանին նախազգուշացնել վարչական իրավախախտումը շարունակելու հետևանքների մասին:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Ջիվան Սարիբեկի Ավոյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

24.07.2020

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24»«հուլիսի» 2023 թվական N 1831 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հուլիսի 20-ին ժամը՝ 11:30 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի (Հաշվառման հասցե՝ ՀՀ Ք.Երևան, Մ.Ավետիսյան 2 փողոց, 17 ա շենք, բնակարան 14, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Խրիմյան Հայրիկ 62 շենք, բնակարան 14 անձնագիր՝ AT 0294834 տրված՝ 31.10.2019 թվականին 007-ի կողմից, նույնականացման քարտ՝ 014784391, տրված՝ 16.02.2022 թվականին 065-ի կեղմից) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հունիսի 07-ին կազմած քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝

Ա.Մովսիսյանը և Ֆ.Հովհաննիսյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի հունիսի 07-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն՝ կցել թվով 3 լուսանկար, ինչպես նաև նույնականացման քարտի և անձնագրի պատճենները:

2023 թվականի հունիսի 07-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից Գյումրի քաղաքի, Խրիմյան Հայրիկ փողոցի, թիվ 62 շենքի հարակից տարածքում, առանց համապատասխան շինարարական թույլտվության, համայնքապատկան հողամասի վրա կատարվում է ինքնակամ շինարարական աշխատանքներ, այսինքն քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով:

2023 թվականի հունիսի 07-ին կազմած արձանագրությունը քաղաքացի Արմեն Խաչիկի Գաբրիելյանը հրաժարվել է ստանալուց, արձանագրության օրինակը առաքվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանը պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի լսումների՝ օրվա, տեղի և ժամի մասին, պատշաճ ծանուցումը ապահովվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի՝ «Ազդարար.ամ» («Azdarar.am») -ի միջոցով:

Քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը ապացուցված է 2023 թվականի հունիսի 07-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացված լուսանկարներով, որոնց ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի, թիվ 62 շենքի հարակից տարածքում կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով.

Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 154-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 29.1-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետով և 15-րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն

աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկի չափով՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

4.Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

5.Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

6.Որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ